**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ/THEORY OF STATE AND LAW/ ТЕОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА**

https://doi.org/10.59546/18290744-2025.4-6-3

ԴԱՎԻԹ ՍԱՐՈՅԱՆ
*ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ*

DAVIT SAROYAN
*Applicant at the Institute of Philosophy, Sociology and Law of the National Academy of Sciences of the Republic of Armenia*

ДАВИД САРОЯН
*Соискатель Института философии, социологии и права Национальной академии наук Республики Армения*

# ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

# THE PROBLEM OF ESTABLISHING A SOCIAL-LEGAL STATE

# ПРОБЛЕМА СТАНОВЛЕНИЯ СОЦИАЛЬНО-ПРАВОВОГО ГОСУДАРСТВА

**Ներածություն**

Սոցիալ-իրավական պետությունը արդի ժամանակաշրջանի հասարակության էվոլյուցիոն զարգացման արդյունք է: Եթե իրավական պետության հայեցակարգը և պրակտիկան հիմնականում 19-րդ դարի ծնունդ են, իսկ սոցիալական պետությունը՝ 20-րդ դարի երկրորդ կեսի, ապա «սոցիալ-իրավական» պետության դոկտրինը՝ 21-րդ դարի սկզբների տեսական մտահաղացումների արդյունք է: Սոցիալ-իրավական պետությունը «սոցիալական» և «իրավական» պետության հատկանիշների մեխանիկական համակեցություն չէ, այլ իր բնույթով և էությամբ մեկ միասնական ամբողջական պետության հատկանիշ է, որում իրավականն ու սոցիալականը գտնվում են բարդ դիալեկտիկական փոխկապվածության մեջ, որին ներկայում քիչ պետություններ են հավակնում այդպիսիք լինել:

Գիտական գրականության մեջ որպես սոցիալ-իրավական պետություն անվանվում է այն պետությունը, որը ապահովում է յուրաքանչյուր մարդու կողմից արժանապատիվ կյանքի

իրավունքի իրականացման պայմանները[1]: «Արժանապատիվ կյանք» ոլորտը սահմանվում է հասարակության կամ միջազգային հանրույթի մշակութային ստանդարտներին համապատասխան անհատների և սոցիալական խմբերի կողմից յուրացվող կյանքի մակարդակի, կենսական բարիքների ծավալների և որակի հասկացություններում: Գոյություն ունի նվազագույն կենսամակարդակ, որի սահմաններից ելքը նշանակում է մարդուն ոչ արժանի կենսամակարդակ:

**Հիմնական հետազոտություն**

Արժանապատիվ կյանքի մարդու իրավունքի ոլորտն անվանվում է սոցիալական իրավունք, այսինքն՝ պետությունից կենսական ռիսկի պայմաններում նյութական բարիքների ստացման հավակնության հնարավորություն: Սոցիալական իրավունքների համատեքստում կենսական ռիսկը նշանակում է կենսական ռեսուրսների վնասման կամ կորստի վիճակ, որը ծագել է ոչ անհատների մեղքով, այլ հասարակական և բնական գործընթացների արդյունքում: Կենսական ռիսկի կրճատումը հնարավոր է մարդկանց պաշտպանվածությունը ապահովող փոխհատուցումային միջոցների հաշվին: Օրինակ, դժբախտ պատահարի, հիվանդության, գործազրկության, ռիսկերը նվազեցվում են բարեգործությամբ, սոցիալական ապահովագրությամբ, կենսաթոշակով, նպաստներով և օգնության այլ տեսակներով: Իրավագիտությունում, քաղաքագիտությունում և տնտեսագիտական սոցիոլոգիայում պաշտպանվածության տվյալ տեսակը անվանվում է «սոցիալական պաշտպանվածություն», իսկ պետության կողմից միջոցների համախումբը՝ «սոցիալական քաղաքականություն»[2]:

Իրավական պետության՝ սոցիալական քաղաքականության ելակետ համարվում է սեփական կենսական ռիսկի նվազեցման համար անհատի հոգսը: Սովորաբար մարդու սոցիալական իրավունքներին դասվում են սոցիալական ապահովության, կրթության, առողջության պահպանման և բժշկական օգնության, բնակարանի իրավունքները, երեխաների և հաշմանդամների հատուկ իրավունքները: Իրավական պետության սոցիալական քաղաքականության օբյեկտ են անհատները կամ հաշմանդամների խմբերը, անկախ վերջիններիս տնտեսական կարգավիճակներից և եկամուտներից: Սոցիալական քաղաքականության այլ հատկանիշ է անընդհատության բնույթը, քանի որ այն կողմնորոշված է անհատների պաշտպանությանը:

Քաղաքացիների սոցիալական իրավունքները ապահովող պետության սոցիալական քաղաքականությունը կախված է պետության ռեսուրսներից, երկրի տնտեսական զարգացումից և սոցիալական կողմնորոշում ունեցող տնտեսական քաղաքականությունից: Ի տարբերություն սոցիալական քաղաքականության, տնտեսական քաղաքականությունը կողմնորոշված է ամբողջ տնտեսական համակարգի գործառնությանը: Դրա օբյեկտը սոցիալական է, այլ ոչ քաղաքական: Այն համապատասխանում է քաղաքացիական հասարակություն ձևավորող

[1] Տես *Волгин Н. А, Гриценко Н. Н, Шарков Ф. И.* Социальное государство, М., 2003. С. 47-48. *Каменцкий В. А, Патрикеев В. П.* Лекции по экономике. Проблемы становления социального государства. М., 2001. С. 314. *Гриценко Н. Н.* Современное правовое социальное государство // Экономическая безопасность: вопросы реализации государственной стратегии, М., 1988. С. 133-137. *Болелов А. А.* Российское государство: правовое и социальное II Проблемы самобытности российской государственности: правовые и национально-идеологические аспекты. Ростов н/Д. 1996. С. 29-31. *Резанова Л. А.* Сущность социального государства и ее проявление в сфере образования. Автореферат дис... кандидата юридических наук. Ростов н/Д. 2004.

[2] Տես *Мамут Л. С.* Социальное государство с точки зрения права // Государство и право. 2001, №7. С. Б-14, *Гриценко Н. Н.* Социальному государству - эффективную социальную политику // Материалы конгресса "Человек: Социальная политика в период осуществления экономических реформ", М. 1994. С. 8-14, *Чернобровкин И. П.* Социальная защещенность //Человек и общество: краткий энциклопедический словарь-справочник (политология). Ростов н/Д. 1997 С. 479.

բնակչության, դրա սոցիալական շերտերի կենսամակարդակի աճի հասարակական պահանջներին: Տնտեսական քաղաքականության նպատակն է՝ բնակչության առավել լիարժեք զբաղվածության ապահովում, եկամուտների վերաբաշխում, արտադրության անկման շրջանի կրճատում: Տնտեսական քաղաքականությունը ունի ցիկլիկ բնույթ, քանի որ կողմնորոշված է տնտեսական համակարգի հավասարակշիռ զարգացմանը: Տնտեսությունը ենթակա է կառուցվածքային փոփոխությունների և ցիկլիկ տատանումների: Հետևաբար, արդյունավետ լինելու համար տնտեսական քաղաքականությունը պետք է ճկուն լինի, հաշվի առնի շուկայական տնտեսության փոփոխություններին գործարարների հարմարեցման և վարձու աշխատողների զբաղվածության ոլորտում մոբիլության ունակությունները[3]:

Անհրաժեշտ է տարբերակել «սոցիալական իրավական պետության քաղաքականություն, դրա սոցիալական և տնտեսական քաղաքականություն» հասկացությունները: Առաջին հասկացությունն առավել լայն է և ընդգրկում է վերջին երկու հասկացությունները: Սոցիալական պետության քաղաքականությունն ապահովում է արժանապատիվ կյանքի համար մարդու իրավունքի իրականացման պայմանները անհատի սոցիալական պաշտպանության (սոցիալական քաղաքականություն) և բնակչության, քաղաքացիական հասարակության սոցիալական շերտերի կենսամակարդակի աճի (տնտեսական քաղաքականություն) միջոցներով: Իրավական պետության սոցիալական քաղաքականության անընդհատության և ցիկլիկ տնտեսական քաղաքականության ճկունության միջև ծագում են հակասություններ: Եթե քաղաքականության ցիկլիկության խնդիրները չեն լուծվում տնտեսական միջոցներով, ապա սոցիալական ոլորտը սոցիալական ծրագրերի կրճատման և նպաստների չափերի նվազեցման ձևով վերածվում է տնտեսական քաղաքականության լրացուցիչ միջոցի: Հակասության օպտիմալ լուծումը կայանում է սոցիալական և տնտեսական քաղաքականությունների միջև փոխզիջումն է, սակայն ոչ պետական օգնության միջոցների հաշվին: Այլ դեպքում՝ բնակչության խմբերը կհայտնվեն աղքատության շեմին:

Պետության սահմանադրական իրավունքում «Սոցիալական պետություն» հասկացությունը սկսել է հայտնվել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 11949 թ. ԳԴՀ հիմնական օրենքում, իսկ հետագայում նաև այլ երկրներում[4]: Ըստ Հ.Լաուֆերի՝ կարծիքի, տվյալ հասկացության ինստիտուցիոնացումն արդարացվում է համերաշխության բարոյական նորմայով: «Արդարությունը և հավասարությունը» իրականացվում են համերաշխության միջոցով, երբ քաղաքացիները կյանքի են կոչում «մեկը կրում է մյուսի հոգսը, քրիստոնեական ուխտը և կիրառում այն առօրյայում, օգնում միմյանց, հոգում թույլերի, մոռացվածների մասին և դրանով իսկ հավասարակշռում փոխադարձ հետաքրքրությունները»[5]: Համերաշխության նորմը, մարմնավորվել է սոցիալական իրավական պետության սկզբունքում, որը նշանակում է քաղաքացիների արժանապատիվ կյանքի համար պետության կողմից մասնավոր ոլորտում միջամտություն: Սոցիալական իրավական պետության սկզբունքը չի բացառում, այլ լրացնում է իրավական պետության դեմոկրատական սահմանադրականությունը, ինչն էլ պահանջում է քաղաքացու տնտեսական և դեմոկրատական ազատությունների և իրավունքների պահպանություն: Գերմանիայի Սահմանադրական դատարանի մեկնաբանություններում ասվում է, որ առանց մարդու սոցիալական իրավունքների իրականացման, հնարավոր չէ նրա դեմոկ-

[3] Տես *Гриценко Н. Н.* Социальное государство (социальное-экономический аспект) // Экономическая роль государства в переходной экономике.Челябинск, 1998.С. 3-18.
[4] Տես *Волгин Н. А. Гриценко Н. Н. Шарков Ф. И.* Социальное государство, С. 43.
[5] Տես *Laufer H.* Der Grundkonsens in der freineitlichen Demokratie, Koln, 1988. էջ 30.

ռատական իրավունքների իրականացում[6]:

Հարց է ծագում՝ կարելի է արդյոք սոցիալական իրավական պետությունը համարել լիբերալ ինստիտուտ: Եթե «սոցիալական լիբերալիզմ» եզրույթն ընկալվի նեղ իմաստով, ապա մնում է այն նույնականացնել բուրժուական լիբերալիզմի հետ, որն էլ հանդես է գալիս տնտեսությունում պետական միջամտությանը դեմ: Լիբերալիզմի նման միակողմանի ընկալումը հաշվի չի առնում տվյալ շարժման պատմականությունը: Բուրժուական լիբերալիզմը գնահատել և շարունակում է գնահատել այդ միջամտությունը՝ որպես հակալիբերալ գործողություն: Միևնույն ժամանակ սոցիալական օրենսդրության գործման պահից լիբերալ-դեմոկրատները հավանություն էին տալիս պետական սահմանափակ օգնությանը, արդարացնում այն մասնավոր՝ նախաձեռնությամբ (որը պետք է սոցիալապես պաշտպանվի) և սեփական կենսամակարդակի համար անհատի պատասխանատվության հին գաղափարով: Մտածողության այս եղանակը պահպանվել է մինչև մեր օրերը: Այն կողմնորոշված է տնտեսական խնայողությանը[7]:

Սոցիալ-տնտեսական ոլորտում ներկայիս պետական պատասխանատվության աճը վկայում է լիբերալիզմի ձևափոխության վերաբերյալ, վերջինս վերաիմաստավորել է չմիջամտման նախկին սկզբունքը: Այդ իսկ պատճառով սոցիալական իրավական պետությանն էվոլյուցիոն անցումը կարելի է դիտարկել որպես լիբերալ շարժման ձևափոխման գործընթաց: Տվյալ հասկացությամբ նշում ենք պետության կողմից մարդկանց մեծամասնության արժանապատիվ կյանքի համար հնարավորություն ստեղծող տնտեսական և սոցիալական քաղաքականությունների յուրացումը: Իրավական սոցիալական պետությանը անցումն ուներ հոգևոր նախադրյալներ և պայմանավորված էր տնտեսական, սոցիալ-քաղաքական պատճառներով[8]:

Իրավական պետության ժամանակակից սոցիալական քաղաքականության ինտելեկտուալ նախադրյալներին դասվում է «Լուսավորությունը», որը ձևավորեց մարդկության նոր պատկեր, վերջինս, ըստ Ի. Կանտի խոսքերի, նյութական բարեկեցությունը դասեց այս աշխարհում «երջանիկ կյանքի մարդկային իրավունքին[9]: Երջանկության հնարավորության վերաբերյալ հավատը (կյանքի նյութական պայմաններում՝ մարմնավորված մարդկային գիտակցության առաջընթացի հաշվին) համընկնում է հավասարության մասին թեզի հետ: Սոցիալ-տնտեսական անհավասարության աճը գնահատվում է որպես անապահով մարդկանց դժբախտություն և անարդարություն: XIX դարում լիսեֆերիզմի քաղաքականությունը խոչընդոտում էր քաղաքացիական հասարակության ստորին շերտերի կարգավիճակի փոփոխությանը: Դրա

[6] Տես նույն տեղը, էջ 31:

[7] Տես *Ford H.L.* Work, Organization and Power. Introduction to Industrial Sociology. Texas, 1988 էջ:

[8] Տես *Любашиц В. Я.* Формирование гражданского общества - важнейшее условие достижения свободы личности// Права человека в России: время надежд и разочарований. Ростов-на-Дону, 1998, Он же. Становление гражданского общества: проблемы теории // Ученые записки. Сборник научных статей // Рост. гос. ун-т. юрид. фак. / Отв. ред. С. С. Цыганенко. Ростов-на-Дону: Проф-Пресс. 2000. Вып. 1. Права человека и формирование гражданского общества в России// Вопросы теории государства и права. Вып. 3, Саратов, 2001, он же. Правовое государство и основные принципы его функционирования // Вестник Луганского института внутренних дел МВД Украины. Специальный выпуск. Луганск, 2001, он же. Правовое государство как институт обеспечения прав человека // В кн. Права человека и конституционная безопасность. Материалы докладов и сообщений участников междвузовской научно-практической конференции // Отв. ред. *Н. С. Бондарь*. Ростов-на-Дону: изд-во Рост, ун-та, 2002, Любашиц В. Я., Толстик О. В. Обеспечение прав человека и гражданина - определяющий фактор развития Российского государства // В кн. Проблемы российской правовой системы. Инновационные процессы в образовании. III международная научно-практическая конференция. Таганрог, 2003, *Любашица В. Я, Сулименко Н. В.* Гражданское общество и личность//В кн. Российская Академия юридических наук. Научные труды. Вып. 3, Т. 1, М. 2003.

[9] Տես *Кант И. О*. поговорке... //Кант и Соч. Ш 6 т. М., 1966,Т. 6, С. 374.

բացասական հետևանքները և դրա հիմքերի դեմոկրատական քննադատության տարածվածությունը (Ռուսսո, մարքսիզմ) նախապատրաստեցին XX դարում ավարտված իրավական պետության սոցիալական բարեփոխումների հոգևոր միջավայրը[10]:

XX դարում աշխատանքային իրավունքի համար պայքարը հաճախ ուղեկցվում էր բախումներով աշխատավորության և վարչակազմի միջև: Վերջինս, շատ դեպքերում, դիմում էր բռնության՝ օգտագործելով ոստիկանության և բանակի ուժերը՝ աշխատավորության շարժումները ճնշելու նպատակով: Պատմական հիշողությունը պահպանել է աշխատավորական շարժումների ճնշման բնորոշ օրինակները՝ սկսած XIX դարի 30-40-ականների Լիոնի և Գերմանիայի ջուլիակների ելույթներից մինչև 1886 թ. Չիկագոյի իրադարձությունները և 1905 թ. Ռուսաստանի աշխատավորության գնդակահարությունը: Արհմիությունների առաջնորդների դեմ ցուցադրական դատավարությունները, «սև ցուցակների» կազմումը, ինչպես նաև լոկաուտների կիրառումը դարձած էին գործարարության կողմից աշխատավորության պահանջների նկատմամբ որդեգրած ավանդական ճնշման գործիքակազմի մաս:[11]:

Քաղաքացիական հասարակության անդամների սոցիալական զրկանքները բերեցին 1873-1878, 1883-1885, 1893 1897, 1908-1909, 1913-1914 թվականների տնտեսական ճգնաժամերը: 1929-1939 թթ. Մեծ դեպրեսիան բացահայտեց լիբերալ տնտեսագետների տեսանկյունների սխալությունը, ովքեր հավատում էին, որ շուկայական տնտեսությունը ունակ է ներքին ռեսուսներով վերականգնել իր հավասարակշիռ գործառնությունը: Դեպրեսիան արդիականացրեց ճգնաժամային երևույթների մեղմացման նպատակներով տնտեսության մեջ՝ պետության ներառվածության՝ հասարակական պահանջը: Առավել ակնհայտ էր դառնում, որ շուկայական մրցակցությունը ծնում է մենաշնորհներ, որոնք էլ վնասում են հասարակական շահերին, ծնում ռեսուրսների՝ ոչ ռացիոնալ բաշխում, նպաստում շահույթներում անհավասարությանը և հանդիսանում սպառնալիք դեմոկրատական իրավական պետության համար: Հասունացել էր հակամենաշնորհային օրենսդրության շահույթների վերաբաշխման պետական քաղաքականության կարիքը[12]:

XIX դ կեսերին և XX դ ընթացքում հաստատվեցին մարդու իրավունքների նոր ընկալումներ սոցիալական իրավունքների սահմանման արդյունքում: Այս իրավունքների ընդարձակման օրինակ հանդիսացավ 1848 թ.՝ ֆրանսիական հեղափոխությունը: Բացի գործադուլի իրավունքից և տարբեր տեսակի խտրականությունների դեմ երաշխիքներից՝ գործունակ անձինք օժտվում էին աշխատանքի իրավունքով, ինչը պետությանը պարտավորեցնում էր իրականացնել լիարժեք զբաղվածության քաղաքականություն: Ազգային տնտեսության հետ կապված իրավունքների երկրորդ խումբը ներառում է վարձու աշխատանքի պայմանները շոշափող կառավարական որոշումներում վարձկան աշխատողների մասնակցության և այդ աշխատակիցների շահույթի մասնաբաժնային յուրացման իրավունքները: Իրավունքների երրորդ խումբը կազմում են հանգստի և վճարվող արձակուրդի, սոցիալական օգնության, մասնագիտական ուսուցման, մշակութային հասանելիության իրավունքները[13]:

Ի տարբերություն սոցիալական քաղաքականության, սոցիալական կողմնորոշմամբ տնտեսական քաղաքականության ելակետ է ոչ թե անհատի վերաբերյալ հոգացությունը, այլ կենսագործունեության միջոցների հասարակական պահանջը: Տնտեսական քաղաքականության սկզբունքներ հանդիսանում են տնտեսական ցիկլերի բացասական հետևանքների

[10] Տես *Волгин Н.А. Гриценко Н.Н. Шарков Ф. И.* Социальное государство, М., 2003, С. 38.
[11] Տես *Черниловский З.М.* Всеобщая история государства и права. М., 1996, С. 539-540.
[12] Տես *Макконнел К.Р. Брюс С.Л.* Экономикс: принципы, проблемы и политика, В 2, т. М., 1992, Т. 2, С. 292-293.
[13] Տես *Омальченко О.А.* Всеобщая история государства и права, Т. 2, С. 159.

նվազեցումը և քաղաքացիական հասարակության սոցիալական խմբերի միջև եկամուտների առավել հավասարաչափ բաշխումը: Առաջին սկզբունքին համապատասխանում է շուկայական տնտեսությունում պետական ինտերվենցիոնիզմի քաղաքականությունը: Երկրորդ սկզբունքին՝ դիստրիբուտային քաղաքականությունը: Այս քաղաքականությունը վարող պետությունը երբեմն անվանվում է համընդհանուր բարեկեցության պետություն: Տեսական պլանում պետական բարեկեցության հայեցակարգը իրենում ներառում է Ջ. Քեյնսի հայեցակարգը, որը հիմնավորել է շուկայական տնտեսության մեջ պետության ակտիվ միջամտության անհրաժեշտությունը[14]:

Տնտեսական ինտերվենցիոնիզմի քաղաքականությունը (անվանվում է նաև կառուցվածքային քաղաքականություն) կողմնորոշված է բնակչության խմբերին, տնտեսական հատվածներին կամ ապրանքներին շուկայի բացասական հետևանքներից պաշտպանությանը: Շուկայականների փոխարինումը պետական գործառույթներով կատարվում է մասնավոր ձեռնարկությունների ներդրումային ունակությունների պահպանության պայմանով: Տնտեսական աճը կորցնում է ներքին դինամիկան, եթե տնտեսությունը կառավարվում է պետական իշխանությամբ: Այդ իսկ պատճառով պետությունը կիրառում է գործարարական որոշումների սահմանային պայմանների կարգավորման կողմնակի երևույթների կանխարգելման կամ փոխհատուցման մարտավարության ակտիվ ձև: Տարածում է ստացել տնտեսական ճգնաժամերի սահմանափակման ներդրումային մարտավարությունը: Ճգնաժամային տենդենցները ոչ միայն մեղմանում, այլ նաև միահյուսվում են պետության վարչական համակարգում: Այստեղ ձեռք են բերում կոնֆլիկտի ձև (կոնյուկտուրային և կառուցվածքային քաղաքականության միջև, պետական պարտքի աճ), և հետագայում խնդիրների ծավալը տեղափոխվում է տնտեսություն, երբ վերջինս դուրս է գալիս ճգնաժամից: Ինտերվենցիոնիզմի քաղաքականության արդյունավետության ցուցանիշ հանդիսանում է պետական պարտքի նվազեցումը[15]:

Իրավական պետության դիստրիբուտային (փոխհատուցումային) տնտեսական քաղաքականության նպատակն է հավասարեցնել տնտեսական գործունեության և պատասխանատվության պայմանները: Դրա գործիքներն են օրենսդրությունը, հարկերը, նպաստները: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է իրականությունում կատարյալ շուկայական տնտեսությունների բացակայությամբ, խտրականության, աշխատանքային մոբիլության առկայությամբ, առաջնությունների փոփոխմամբ և տեխնիկական նորամուծություններով: Քանի որ փոխհատուցումային քաղաքականությունը գերադրապես ունի սոցիալ-տնտեսական բնույթ, վերին և ստորին շերտերի միջև շահույթների հարաբերական հավասարեցումը ընդունվում է որպես դրա արդյունավետության ցուցանիշ[16]:

**Եզրակացություն**

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա հանգել ենք հետևյալ եզրակացության.

Սոցիալ-իրավական պետության կայացումը բարդ ու բազմաշերտ գործընթաց է, որի համար անհրաժեշտ են քաղաքացիական հասարակության առկայությունը, հասարակությունում իրավունքի գերակայությունը, սոցիալտնտեսական անհրաժեշտ նախադրյալների առկայությունը և մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների, այդ թվում՝ անկախ դատական համակարգի բնականոն գործունեությունը:

[14] Տես *Макконнел К.Р., Брюс С.Л.* Экономикс: М., 1992, Т. 2, С. 301.
[15] Տես *Райзберг Б.А. Фатхутдинова Р.А.* Управление экономикой. М., 1999, С.734.
[16] Տես նույն տեղը, էջ 750:

**Ամփոփագիր:** Սույն գիտական հոդվածում հանգամանորեն քննարկվում են սոցիալ-իրավական պետության կայացման նախադրյալները: Հոդվածում հեղինակը զարգացնում է այն հայեցակարգային մոտեցումը, համաձայն որի՝ սոցիալ-իրավական պետությունը մեկ միասնական ամբողջական պետահիրավական համակարգ է, որում իրավականը և սոցիալականը ոչ թե հարկադրվում են, այլ զուգորդվում և փոխլրացնում են միմյանց:

Սոցիալ-իրավական պետության իրավական հիմքերը և սոցիալական հիմքերը պետք է համապատասխանեն միմյանց, գործեն կողք կողքի, միասնաբար, որը հենց արտահայտում է այդ պետության բնույթը, էությունը և առաքելությունը: Այսպիսով, սոցիալական իրավական պետության ակտիվությունը կողմնորոշված է քաղաքացիների առավել մեծ թվի արժանապատիվ կյանքի իրավունքի իրականացման պայմանների ստեղծմանը: Սոցիալ-իրավական պետությունը «սոցիալական» և «իրավական» պետության հատկանիշների մեխանիկական համակեցություն չէ, այլ իր բնույթով և էությամբ մեկ միասնական ամբողջական պետության հատկանիշ է, որում իրավականն ու սոցիալականը գտնվում են բարդ դիալեկտիկական փոխկապվածության մեջ, որին ներկայումս քիչ պետություններ են հավակնում այդպիսիք լինել: Գիտական գրականության մեջ որպես սոցիալ-իրավական պետություն անվանվում է այն պետությունը, որը ապահովում է յուրաքանչյուր մարդու կողմից արժանապատիվ կյանքի իրավունքի իրականացման պայմանները: Իրավական պետության կայացման հիմնախնդիրները իրավացիորեն կապված են սահմանադրական փոփոխությունների հետ, որոնք հստակորեն ամրագրված են իրավական պետության սոցիալական, տնտեսական և օրենսդրական հիմքերում, քանի որ այն սահմանադրական պետություն է, որում գերակայում են իրավունքը և սահմանադրական օրինականությունը, ինչպես նաև իրավական նորմի սահմանադրականացումը: Իրավական պետությունը օրենքի գերակայության վրա հիմնված ինքնիշխան քաղաքական կազմակերպություն է, որում երաշխավորված է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

**Annotation**. This scientific article thoroughly discusses the prerequisites for the establishment of a social-legal state. In the article, the author develops a conceptual approach according to which the socio-legal state is a single integral state-legal system in which the legal and social are not imposed, but combine and complement each other.

The legal foundations and social foundations of a socio-legal state must correspond to each other, act side by side, together, which expresses the nature, essence and mission of this state.

Thus, the activity of the social legal state is oriented towards creating conditions for the realization of the right to a dignified life for the largest number of citizens.

A social-legal state is not a mechanical coexistence of the features of a «social» and a «legal» state, but rather, by its nature and essence, is a feature of a single, holistic state, in which the legal and the social are in a complex dialectical interdependence, which few states currently claim to be. In scientific literature, a socio-legal state is defined as a state that ensures the conditions for the exercise of the right to a dignified life by every person.

The issues of establishing a legal state are legally related to constitutional amendments, which are clearly enshrined in the social, economic and legislative foundations of a legal state, since it is a constitutional state in which law and constitutional legitimacy prevail, as well as the constitutionalization of legal norms. A legal state is a sovereign political organization based on the rule of law, in which the protection of human rights and freedoms is guaranteed.

**Анномация.** В данной научной статье подробно рассматриваются предпосылки становления социально-правового государства. В статье автор развивает концептуальный подход, согласно которому социально-правовое государство представляет собой единую целостную государственно-правовую систему, в которой правовое и социальное не навязываются, а сочетаются и дополняют друг друга. Правовые основы и социальные основы социально-правового государства должны соответствовать друг другу, действовать вместе, что выражает природу, сущность и миссию этого государства. Таким образом, деятельность социально-правового государства ориентирована на создание условий для реализации права на достойную жизнь наибольшего числа граждан.

Социально-правовое государство не есть механическое сосуществование черт «социального» и «правового» государства, а есть по своей природе и сути черта единого, целостного государства, в котором правовое и социальное находятся в сложной диалектической взаимозависимости, на которую в настоящее время претендуют немногие государства. В научной литературе социально-правовое государство определяется как государство, обеспечива-

ющее условия для реализации каждым человеком права на достойную жизнь. Вопросы становления правового государства юридически связаны с конституционными изменениями, которые четко закреплены в социальных, экономических и законодательных основах правового государства, поскольку это конституционное государство, в котором господствуют право и конституционная законность, а также конституционализация правовых норм. Правовое государство — суверенное политическое устройство, основанное на верховенстве закона, в котором гарантируется защита прав и свобод человека.

***Բանալի բառեր*** *- սոցիալ-իրավական պետության, սոցիալական պետություն, իրավական պետություն, պետաիրավական համակարգ, իրավունքի գերակայություն, իրավունքով կառավարում:*

***Keywords:*** *Socio-legal state, social state, legal state, state and legal system, rule of law, legal management.*

***Ключевые слова****: социально-правовое государство, социальное государство, правовое государство, государственно-правовая система, верховенство закона, правовое управление.*

**Օգտագործված գրականության ցանկ**

1. Волгин Н.А., Гриценко Н.Н., Шарков Ф.И. , Социальное государство. М., 2003.
2. Տես Мамут Л. С. Социальное государство с точки зрения права // Государство и право. 2001, №7:
3. Гриценко Н. Н. Социальное государство (социальное-экономический аспект) // Экономическая роль государства в переходной экономике.Челябинск, 1998. С. 3-18.
4. Տես Волгин Н. А. Гриценко Н. Н. Шарков Ф. И. Социальное государство, С. 43:
5. Laufer H. Der Grundkonsens in der freineitlichen Demokratie, Koln, 1988, էջ 30.
6. Ford H.L.Work, Organization and Power. Introduction to Industrial Sociology. Texas, 1988 էջ:
7. Любашиц В. Я. Формирование гражданского общества - важнейшее условие достижения свободы личности// Права человека в России: время надежд и разочарований. Ростов-на-Дону, 1998,
8. Кант И. О. поговорке... //Кант и Соч.Ш 6 т. М., 1966, Т. 6. С.374.
9. Волгин Н.А. Гриценко Н.Н. Шарков Ф. И. Социальное государство, М., 2003, С.38.
10. Черниловский З.М. Всеобщая история государства и права. М., 1996. С. 539-540.
11. Макконнел К.Р. Брюс С.Л. Экономикс: принципы, проблемы и политика,В 2 т. М., 1992, Т. 2, С. 292-293.
12. Омальченко О.А. Всеобщая история государства и права, Т. 2, С. 159.
13. Макконнел К.Р. Брюс С.Л. Экономикс: М., 1992, Т. 2, С. 301.
14. Райзберг Б.А. Фатхутдинова Р.А.Управление экономикой. М., 1999, С. 734

**Սարոյան Դ.** - ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, էլհասցե՝ davitsaroyan09@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 10.03.2025 թ., տրվել է գրախոսության 10.03.2025 թ., երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ. Սաֆարյանի կողմից, ընդունվել է տպագրության 10.07.2025 թ.: